

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ի ՓՈՒՔԻ ԵՒ Ի ՄԵԾ ՀԱՅԱ

ՃԱՆԱՊԱՐՀ Ի ԶՄԻՒՌՆԻՈՅ ՅԱՅԱՍՈՒԿՈՒՔ ԵՒ ՅԵՓԵՍՈՍ

Ի ԶՄԻՒՆԻՈՅ մինչև ցԵփեսոս երեքտասան ժամք են . և 'ի կէս ճանապարհին համարի գիւղն թռիանտա , առ որով անցանէ գետակ մի . հիւղք 'ի նմա քանի մի ցրիւ , կրպակք և իջևան մի : Յաջմէ ճանապարհին են ապառաժ լերինք բարձրաբերձք և անմատչելիք . յորոց 'ի միումն գագաթան՝ ամրոցն Քէյի գալէսի . և 'ի ձախմէ դարձեալ 'ի հեռուստ լերինք բարձունք : Այս ճանապարհ արահետ ընդ դաշտս տանի մինչև ցգետ մի որ հեռի է յԱյասուլուքայ իրը կէս ժամաւ . կամուրջ նորա բազմակամար , յորոց ոմանք խցեալ են երկուստեք հողով գետեզերն : Անցեալ ընդ կամուրջն և անցեալ առ ստորոտով հանդիպակաց լերին ապառաժի , ընդ անհարժ ուղին և շրջեալ ընդ ձախմէ , բանին 'ի հանդիպոյ և յաջմէ կուսէ լայնածաւալ դաշտավայրք գեղջն Այասուղուքայ . և 'ի հեռուստ , երեխ 'ի ձախմէ ճանապարհին , մեծադիր դղեակ նորին , որոյ պարիսպք սկսեալ 'ի գագաթանէ բլրոյն , ուրանօր միայն անկործան կան տակաւին , հասանեն մինչև ցստորոտն մեծաւ մասամք քայլքայեալք . և 'ի բացեայ նորա է 'ի հանդիպոյ ջրանցքն մեծ՝ որոյ կամարացն սիւնք կանգուն կան տակաւին կիսով չափ բարձրութեան : Յաջմէ դղեկին առընթեր պարապին և առ ճանապարհաւն որ մուծանէ 'ի գիւղն , է մզկիթ հոյակապ , թէպէտ և աւերակ , մեծաւ մասամք կճապատ ներքոյ և արտապոյ . մեծամեծ կունիտ սիւնքն , յորոց վերայ հաստատեալ էր յարկն , նշխարք են աւերակաց Եփետոսի : Բաց 'ի մզկիթէս կան և այլ մզկիթք փոքրունք և անշուք . ևս և կամարակապ աղիւսակերտ բնակարանք , անծանօթք . աղբիւր մի և 'ի հանդիպոյ նորին աւազան միւս ևս աղբեր մեծատարած և միակտուր , անկեալ 'ի բացի : Ընդ բովանդակ տարածութիւն գեղջս , որ արդ սակաւաթիւ հիւղիւք գեղջկաց սահմանի , և դոյզն կրպակք և երկու փուամբք , տեսանին ցիր և ցան 'ի գետնի և 'ի հիւսուածս տնակաց և յայլ և այլ որմածե կոյտս քարանց՝ յունարէն արձանագիրք , կոտորակք կճեայ սեանց և պէսպէս զարդուց շինուածոց :

ԵՓԵՍՈՍ

ՆՅՐԻ ՄԱՆԿԱՑ ԱՅՐԻ . — Հանդիպակաց է Այասուլուքայ Եփեսոս՝ իրը քառորդաւ ժամու հեռի 'ի նմանէ առ կայիսադրոս գետով , յայնկոյս Պրիոն և կորիսոս լերանց՝ որ պատեն զնա 'ի թիկանց և 'ի ձախմէ նորա , նմին իրի անտես են յԱյասուլուքայ աւերակք Եփեսոսի : Զե անցեալ ընդ լերինոդ , և հասեալ նախ 'ի հանդիպակաց բլրով մի ապառաժ , իրը 'ի կէս բարձրութեան նորին ընդառաջ

լինի քարայրն փոքրիկ ուր բնակեցան ասեն եօթն մանկունք Եփեսոսի. բերան այրին ծեփեալ աղիւսօք առ Դեկոսիւ, յետ ժամանակաց բացեալ եղեւ. երևին ցայսօր մնացորդք աղիւսացն ամրապէս մածուցեալք. և անցեալ 'ի ներքս որ միջազափ ևեթ խոր է, 'ի բերանոյն սկսեալ յաջակողմն այրին դէպուղիղ 'ի ներքս է կրուան ոտից իբր երեք մեղբաչափ երկայնութեամք, ուր մարթ է սակաւաթիւ անձանց նստել, որ և ունի մարդաչափ բարձրութիւն. իսկ յառաջոյ նորա որ է ձախակողմն այրին՝ պատառուած կայ դէպ'ի ներքս նոյնպէս 'ի բերանոյն սկսեալ, այլ անձուկ և ոչ խորին. Առընթեր այրին յաջակողմն նորին է եկեղեցի յանուն սրբոցն. մուտք նորին քայքայեալ, այլ կամարքն կան տակաւին և է աղիւսակերտ. բայց աւերակօք և հողով ծածկեալ է յատակն մինչև ցվերնախարիսխ կամարացն: Յոյնք շրջակայ վայրաց յամին միանդամ գան անդ պաշտօն կատարել: Մերձ առ եկեղեցեամ երևին յապառամի անդ լերին փորուածոյ դերեզմանք:

ՅՈՎՀ. ԱԿԵՑԱՐԱՆՉԻ ԱՅՐՆ. — Ի ձախմէ այրի մանկանցն առ ստորոտով բլրոյն է քարանձաւ փոքր ուր աւանդեն գրեալ Ա. Յովհաննու զաւետարան իւր: Սակաւ ամօք յառաջ գտեալ ասեն, չգիտեմ որպէս, յայրի անդ աւետարան մի հին, զոր իբրև նշխար ցանկալի փոխադրեն 'ի դիւդն Զիրքինձէ, որ հեռի է անտի երկու ժամաւ, և պահի յեկեղեցւոյ Յունաց ընդ փականօք:

ԱՄՓԻԹԵԱՏՐՈՒ. ԿԱՄ ՄՐՑԱՐԱՆ. — Անցեալ ընդ գաղաթն բլրոյ մանկանցն և իջեալ յայնկոյս ուղղակի, ընդ առաջ լինի 'ի հանդիպոյ և յաջմէ մեծատարած դաշտավայրն Եփեսոսի, և 'ի ձախմէ լերինքն՝ յորոց 'ի ստորոտս են մեծաւ մասսամբ նախնի շինուածքն Եփեսոսի: Եւ նախ ամփիթէատրոնն (stadium) մեծ, որոյ աջակողմեան ստուար պարիսաքք կանգուն կան տակաւին հարուստ տարածութեամք, թէպէտ և վերին մասնն կործանեալ. իսկ ձախակողմեան պարիսպ է լեառնն՝ յոր յեցեալն է. նստարանքն ամենայն՝ փլատակօք աւերակին ծածկեալ են, և փոքր ինչ երևի արտաքոյ գետնոյն: Իսկ ճակատ շինուածոյն բովանդակ կործանեալ: Երկայնութիւն ամփիթէատրոնին է 240 և կէս մեդք:

ԹԷԱՏՐՈՒ. — Թէատրոնն, յորում աղաղակէր ժողովուրդն 'ի ժամու քարոզութեան Պօղոսի առաքելոյ, «Մեծ է Արտեմիս Եփեսացւոց», է 'ի կողմանէ լերինդ յիշելոյ. և սորա կամար մի և եթ մնացեալ է ամբողջ, և արձանագիրք 'ի նմա այլ և այլ, բայց մեծաւ մասսամբ խանդարեալ, և են որ այլ շինուածոց արձանագիրք են և 'ի սորա որմունս յարմարեալ՝ որպէս թուի՝ առ նորոգութեան, զի ոմանք խոտորագիրք են, և այլք յանցարմար տեղով ագուցեալ. և յարձանագրացդ ոմանք յունարէն են ոմանք լատիներէն: — Ի նոյն կարգի թէատրոնին են քարաշէն կամարակապ խորանաձև որմոնք որիշ 'ի միմեանց և ահագին բարձրութեամբք, անընդմիջաբար յեցք 'ի լեառնն որ 'ի թիկանց նոցին. վերջինն 'ի նոցանէ, որ կայ յաջակողմն Արտեմեայ տաճարին, և որոյ հիմոնք որմոցն ևեթ երևին, կրթարան էր և կամ ճեմելիք. յորոյ միջոց վայրն 'ի ստորոտէ լերինն մինչև ցտաճարն Արտեմեայ, 'ի մեծի տարածութեան անդ՝ ցիր և ցան սփոեալ կան յերեսս գետնոյն սիւնք կունիտք խորտակեալք, որոց բաղումք ընդ հողով թաղեալ՝ ծայրքն միայն երևին:

ԱՐՏԵՄԵԱՅ ՏՈԱԾԱՐՆ . — Արտեմեայ տոածարն իսպառ փլատակ է , և չէ մնացեալ քար ՚ի քարի վերայ . այլ բովանդակ շինուածն , որ է ՚ի սպիտակ կճոյ , իբրև յամպրոպաց կարկտահար եղեալ բլրակ մի ձեացեալ է խառն հողով և խճով : Տարածութիւն նորա որչափ ինչ աւանդեն նախնիք իսպառ աներեւոյթ է , զի փլատակ նորա արդ փոքու սահմանի . անշուշտ որպէս բազմաց աւերակաց և սմա հանդիպեալ հողով ծածկիլ ՚ի դարուց հետէ : ի ստուար քարանցն և ՚ի թանձր սեանց չերտաձեւ գործելոց , յորոց միոյն երկայնութիւն ( որ և միջակ տուր լեալ է ) 39 ոտք , և տրամագիծ 4 ոտք և կէս , և յահեղ վերնախարըս-խացն՝ յայտնի երեւի թէ քանի վսեմ և հոյակապ էր շինուածն : իսկ զարդաձեւ մանր քանդակը ՚ի քարինսն անդ չերեխն բնաւ , բաց ՚ի տերեւաձեւ զարդուց ՚ի ծայր մեծի սեանն : թիկունք տաճարիս հանդիպակաց է կորիսոս լերին՝ որ տա-րածեալ է ՚ի ծովակողմն կոյս . և ծովի որ երեւի յեփեսոսէ՝ հեռի է կէս ժամու միջոցաւ :

ԲՈԼՈՐԵՒ ԱԽԱԶԱՆ ՄԵԽ . — Հանդէպ տաճարին Արտեմեայ հարուստ մի հեռաւ-րութեամբ անկեալ կայ ՚ի գետնի աւազան բոլորչի ահեղ մեծութեամբ ՚ի սպի-տակ կճոյ . տրամագիծ նորա 15 ոտք :

Ի ձախակողմն կոյս Արտեմեայ տաճարին բացատ ՚ի միմեանց կան և այլ որմունք , մնացուածք հոյակապ շինուածոց ՚ի մեծամեծ հասարակ քարանց . ո-մանք յորմոցդ մնացելոց ուղղաբերձք են , այլք կամարաձեւք , որոց յեց կան ՚ի կողմանէ այլք դիմարդելք առ անկործան ունելոց զկամարսն . և ՚ի մին ՚ի շինուա-ծոցդ սանդուղք կան ՚ի վեր ելանելի , և այլ սանդուղք յիշանել ՚ի ստորերկրեայ վայր ընդարձակ : Բաց ՚ի քարաշէն աւերակացդ , են և այլ քանի մի աղիւսա-կերտ կամարաձեւ շինուածք , որք և մեծաւ մասամբ անկործան կան :

### ՃԱՆԱՊԱՐՀ ՅԵՐՑԵԿԵ Ի ՊԱՆՏԼՐՄԱՆ , Ի ՄՈՒՀԱԾԱԾ ԵՒ Ի ՊՐՈՒՍԱ.

ԵՐՑԵԿ . — Ծովեղերեայ գիւղ անշուղք այլ գինուղն անուանի , կայ յարեւմուտս հարաւոյ բափուշտաղի ցամաքակղղւոյն , յորմէ ընդ ցամաք մինչև ցՊանտլրմա չորից ժամուց ճանապարհ է : Մի և կէս ժամաւ հեռի յերտէկէ , և իբր քառոր-դաւ ժամու խոտորեալ ՚ի ճանապարհէն ընդ ճախ ՚ի վերայ բլրոյ հանդիպի դիւղն չամամլը . և առ նովաւ աւերակ դղեակն Պալգրզ կոչեցեալ , որոյ մնացորդք փլատակացն հասանեն մինչև ցծովեզրն : Պարանոց ցամաքակղղւոյն ունի լայ-նութիւն գնացից քառորդի ժամու . և դաշտավայր է բովանդակ տարածութիւնն . ընդ որ անցեալ սկսանին արահետ ճանապարհն ՚ի լեռնավայրի , և ստորոտ նոցա ապառաժուտ , որ և ծովեզր է մինչև ցՊանտլրմա , առ որով կայ յաջմէ ճանապարհին երեք քառորդաւ հեռի ՚ի Պանտլրմայէ փոքրիկ գիւղն Մահ-մուտ-քէօյ :

ՊԱՏԼՐՄԱ . — Աւան մեծ ծովեղերեայ , յորում չիք ինչ երեւելի ՚ի շինուածոց , այլ ամենայն անշուք , և տունքն և փողոցքն և կրպակքն . ձեռագործ վաճառ ՚ի նմա է փսխաթ հասարակ , որ ոչ սակաւ նպաստ է ուամիկ գործաւորացն : Եկե-ղեցին Հայոց մեծատարած և կճապատ , և առաջնորդարան առ նմա : ի Պանտլր-

մայէ սկսեալ մինչև ցՊրուսա ամենայն գիւղօրէք մշակեալ են, յորում բաց յորթոց տեսանին անդաստանկն խիտ առ խիտ զարդարեալ թթենեզք վասն շերամոյ:

ՄՈՒՀԱԾԱԸ. — Աւան հեռի 'ի Պանտըրմայէ եօթն ժամաւ, մերձ 'ի Գարատոց գետ, զորոյ բնակիչքն ըմպեն զջուր: Անշուք են և սորա ամենայն շինուածք. և շուկայն մեծ քան զՊանտըրմային, ընդ որոյ ընդ բովանդակ երկայնութիւն երկուատեք շարեալ են արկղաձև քարեայ աւազանք՝ 'ի ջրամբար ժողովրդեանն:

Ի ՄՈՒՀԱԾԱԸ. — Կէս ժամաւ հեռի է գետն մեծակամուրջ, ընդ որ անցեալ՝ սկսանի ահագին դաշտավայր անմշակելի և ճախճախուտ, որ տեէ ժամ և կէս մինչև ցՌշուպար. և է դա բերդ մեծատարած, որոյ հարաւային պարիսպքն անկործան կան տակաւին և ներքնատունք 'ի նմա կամարաշէնք և առ դրամբն նըշան խաչի. իսկ 'ի միջոց վայրի բերդին՝ փոքրիկ բաղանիք մի ևեթ աւերակ: կայ և եկեղեցի Յունաց նորաշէն շինեալ 'ի քարանց բերդին, և դուզնաքեայ տունք: իսկ 'ի հիւսիսոյ կողմանէ անցանէ գետն (Հուինտակ) մեծ և նաւարկելի. որոյ կամուրջն կործանեալ, խարիսկը միայն կան հանդերձ մասամբք կամարաց. նմին իրի մեծ նաւակաւ անցանեն յայնկոյս ճանապարհորդք և գրաստք: Յայն կոյս գետոյդ գարձեալ դաշտավայր է ճախճախուտ, թէպէտ և ուրեք ուրեք մշակեալ, մանաւանդ ուր բլրաձև է երկիրն: Յաջմէ երևի Ռշուպար լիձ, առ որոյ եզերքք քերեալ և անցեալ յաջկոյս, ընդ առաջ լինի ինսիզ-իսան ասացեալն, երբեմն գողոց բնակարան 'ի մեծի դաշտավայրին. և է շինուած քարաշէն և ամուր, անկործան մնացեալ ցայսօր, բազմագմբէթ, և յերիս կարգս տրոհեալ՝ քառակումի կամարասեամբք. և 'ի միջին կարգին կրկին լուսամուտք, զորովք պատեալ է քառակուսի որմն, 'ի գետոյդ չորիւք սեամբք 'ի վեր ունելով զորմն, և լոյս 'ի միջոցէ չորից սեանցն հաղորդի տեղւոյն: կղզի կայ 'ի մէջ լճին հանդերձ աւանաւն Ապիլոն (Abullionte) կոչեցեալ, այն է Ապոլոնիա, մերձ ցամաքին՝ որում հաղորդեալ է փայտեայ կամրջաւ ահագին երկայնութեամբ. և 'ի հանդիպոյ կղզւոյն 'ի վերայ ցամաքին է գիւղն Գարաւ-աղաձ:

Զաբալ աղը, գիւղ մեծ որ հեռի է 'ի ՄՈՒՀԱԾԱԸ. և իջևան կարաւանաց 'ի նմա մեծ: Հեռի 'ի նմանէ իրը 40 վայրկեան, է այլ գիւղ Գարաւասպա, և նոյնքան ևս հեռի գիւղն Պաշրէօյ: իսկ 'ի Զաթալ աղը գեղջէ մինչև ցՊրուսա են ժամիք վեց:

### ԿԱՆՈՆԻ ԱՌՈՂՃՈՒԹԵԱՆ ԱՐԴՈՒՆՔ :

ԱՐԲՈՒՆՔ. — Պատանեկութեան և կամ արբունքի առաջին նշանքը՝ տղայոց վեշտասան և աղջկանց յետ ըրեքտասան ամաց կը սկսի. թէպէտ երբեմն աւելի կանուխ և երբեմն ուշ: Երկու սեւից բնութիւնը կը հաստատուի, աճման ու սննդան եղանակը կը տարբերի. հասակը կ'երկընայ, ողնայարը առաւել ևս կը հաստատի ու կ'ամ-

րանայ, ձայնական փողը չափաւոր աստիճան մը կը ստանայ:

Հիւանդութիւնքն յառաջ կու գան յանբաւականութիւնէ սննդեան, չափէն աւելի մտաւոր աշխատութիւններէ, և զեղս ու անառակ հեշտութիւններէ:

Պատանիք ենթակայ են առաւելապէս նուազութեան կամ արգելական արեան (առեու), իսկ օրիորդք ջային տեսակ մը նուրբ տենդի, որ